ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԳՈՐԾԻՉՆ ՈՒ ՓԻԼԻՍՈՓԱՆ

(Գրիգոր Ասատրյանի ծննդյան 80-ամյակի առթիվ)

Լրացավ պետական-հասարակական գործիչ, Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի նախագահ (2002 թ. ի վեր), փիլիսոփայական գիտությունների դոկտոր Գրիգոր Եգորի Ասատրյանի ծննդյան 80-ամյակը:

Գ. Ասատրյանը ծնվել է 1935 թ. օգոստոսի 31-ին, Էջմիածնի շրջանի Խզնավուզ (ներկայումս՝ Արագած) գյուղում:

Գերազանց գնահատականներով ավարտելով միջնակարգ դպրոցը՝ նա ընդունվում է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետ և ավարտում 1958 թ.՝ գերազանցության դիպլոմով:

Ուսումնառության ընթացքում փիլիսոփայության դասախոսները՝ Աշոտ Բաբախանյանը, Մեհենդակ Մելիքյանը և հատկապես պրոֆեսոր Արամայիս Կարապետյանը Գ. Ասատրյանի մեջ սեր ու նվիրում են ձևավորում փիլիսոփայության նկատմամբ:

Համալսարանում սովորելու տարիներին նա գործուն մասնակցություն է ցուցաբերում հատկապես ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) աշխատանքներին: Երկրորդ կուրսից սկսած՝ մինչև ուսումնառության ավարտը ղեկավարում է համալսարանի ՈՒԳԸ-ի տնտեսա-գիտական բաժինը: Քանի որ համալսարանում չկար փիլիսոփայության ֆակուլտետ, երրորդ կուրսի ուսանող Գ. Ասատրյանը նախաձեռնում և համալսարանի ՈՒԳԸ-ի կազմում առաջին անգամ հիմնում է փիլիսոփայության բաժին, որի անփոփոխ նախագահն է դառնում ինքը: Փիլիսոփայության տարբեր թեմաներին նվիրված զեկուցումներով Գ. Ասատրյանը հանդես է գալիս համալսարանի ՈՒԳԸ-ի ամենամյա ժողովներում՝ արժանանալով բարձր գնահատականի: Այսպես, 1956 թ. ՈՒԳԸ-ի տարեկան ժողովում նրա «Գեղեցիկի փիլիսոփայական ըմբռնումը» զեկուցումը՝ նվիրված գեղեցիկի տեսական-փիլիսոփայական վերլուծությանը, գեղագիտականի բնույթի ու առանձնահատկությունների պարզաբանմանը, շահում է առաջին մրցանակ: Առաջին մրցանակի են արժանանում նաև հաջորդ տարիների գիտաժողովներում նրա կարդացած մյուս զեկուցումները՝ «Դեմոկրիտ Աբդերացու փիլիսոփայությունը» և «Մարք-սիստական փիլիսոփայությունը ճշմարտության մասին», որը համալսարանի հրատարակչական խորհրդի երաշխավորությամբ 1958 թ. տպագրվում է համալսարանի ուսանողական գիտական աշխատանքների անդրանիկ ժողովածուում:

1958 թ. Գ. Ասատրյանն աշխատանքի է անցնում ՀԽՍՀ մինիստրների խորհրդի վերահսկողության հանձնաժողովում(հետագայում՝ Ժողովրդական վերահսկողության կոմիտե): Տարիներ շարունակ լինելով այդ հիմնարկության կուսբյուրոյի քարտուղարը՝ նա ընտրվում

է Երևանի Սպանդարյանի շրջկոմի անդամ, Սպանդարյանի շրջխորհրդի պատգամավոր:

Համալսարանն ավարտելուց անմիջապես հետո, համալսարանի գիտխորհրդի երաշխավորության հիման վրա, բացառության կարգով, մասնակցում է ՀԽՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի բաժանմունքում (հետագայում՝ Ակադեմիայի փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտ) ասպիրանտական տեղի համար անցկացվող մրցույթին: Փայլուն կերպով հանձնելով քննությունները՝ ընդունվում է ասպիրանտուրայի բաժին (գիտ. ղեկ.՝ Հայաստանի գիտության վաստակավոր գործիչ Հայկազ Ասլանյան):

1965 թ. տպագրվում է երիտասարդ փիլիսոփայի անդրանիկ՝ «Նախամարքսյան հումանիզմի պատմությունից» հոդվածը (ՀՍՍՌ ԳԱ տեղեկագիր հաս. գիտ., - 12):

1969 թ. պաշտպանելով ատենախոսությունը՝ ստանում է փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1970 թ. փետրվարին Գ. Ասատրյանն ընտրվում է Հայաստանի կոմկուսի Երևանի Սպանդարյանի շրջկոմի երկրորդ քարտուղար՝ այդ պաշտոնում աշխատելով մինչև 1977 թ.: 1977-1978 թթ. Երևանի քաղաքային կոմիտեի պրոպագանդայի բաժնի վարիչն էր:

1978-1983 թթ. Սպանդարյանի շրջկոմի առաջին քարտուղարն էր: 1980-1981 թթ. նա, պահպանելով Սպանդարյանի շրջկոմի առաջին քարտուղարի պաշտոնը, աշխատանքի է գործուղվում Աֆղանստանի Դեմոկրատական Հանրապետություն, որտեղ աշխատում է որպես ԽՄԿԿ կենտկոմի խորհրդական՝ Աֆղանստանի ժողովրդադեմոկրատական կուսակցության կենտկոմում:

Գ. Ասատրյանի անձնվեր աշխատանքը չի վրիպում ինչպես Աֆղանստանի, այնպես էլ ԽՍՀՄ ղեկավար մարմինների ուշադրությունից. նա արժանանում է «Երախտապարտ աֆղանական ժողովրդից» շքանշանի, երկրորդ անգամ պարգևատրվում Խորհրդային Միության «Պատվո նշան» շքանշանով: Իսկ տարիներ անց՝ 1988 թ. դեկտեմբերին, նրան շնորհվում են (Խորհրդային Միության Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով) «Ինտերնացիոնալիստ մարտիկին» շքանշանը և «Աֆղանստանի Հանրապետությունում ինտերնացիոնալ պարտքը կատարելիս ցուցաբերած արիության և ռազմական սխրագործության համար» պատվոգիրը:

1983 թ. Գ. Ասատրյանը նշանակվում է ՀԿԿ կենտկոմի պրոպագանդայի բաժնի վարիչ, 1989 թ.՝ Կոմկուսի կենտկոմի նորաստեղծ միացյալ ստորաբաժանման՝ գաղափարախոսական բաժնի վարիչ: 1989-1990 թթ. Գ. Ասատրյանը Երևանի քաղաքային կոմիտեի առաջին քարտուղարն էր:

Ղարաբաղյան շարժման առաջին տարիներին՝ 1988-1990 թթ., նա ջանք չի խնայում Լեռնային Ղարաբաղի հայության ազգային ինքնորոշման, սեփական հողում ազատ ապրելու իրավունքի համընդհանուր ճանաչման գործին նպաստելու՝ քարոզչության, մամուլի, հեռուստատեսության ու ռադիոյի միջոցով:

Անվերապահորեն պաշտպանելով խորապես արդարացի, հայրենասիրական շարժումը՝ նա, միաժամանակ, սկզբունքային ու անհաշտ դիրքորոշում է հանդես բերում երկրի սոցիալ-տնտեսական ու քաղաքական բնականոն կյանքը չարամտորեն ապակայունացնող այն օտարամոլ ուժերի դեմ, որոնք հայրենասիրության քողի տակ ամեն կերպ ձգտում էին հայ

ժողովրդի մեջ սերմանել հակախորհրդային ու հակառուսական տրամադրություններ, Արցախյան շարժումը փոխադրել ուրիշ հուն՝ այն ծառայեցնելով սոցիալիզմի տարիներին հայ ժողովրդի ձեռք բերած նվաճումների վարկաբեկմանը, երկրի սոցիալ-տնտեսական ու հոգևոր կարողությունների խարխլմանը, ժողովրդի բնականոն կյանքի ապակայունացմանը, երկրում գործող պետական կարգի տապալմանը:

Գ. Ասատրյանը հայ ժողովրդի, մասնավորապես նրա արցախյան հատվածի արմատական շահերի, Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի հետևողական պաշտպանությամբ է հանդես գալիս տարբեր մակարդակների պաշտոնական հանդիպումներում ու բանակցություններում: Հայ-ադրբեջանական սահմանամերձ գոտում, Իջևանի շրջանի տարածքում գտնվող ընդունելությունների տանը՝ 1989 թ. ապրիլ ամսին տեղի ունեցավ հայ-ադրբեջանական բարձր մակարդակի հանդիպում. մասնակցում էին Հայկոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանը, երկրորդ քարտուղար Օլեգ Լոբովը և գաղափարախոսական բաժնի վարիչ Գ. Ասատրյանը, ադրբեջանական կողմից՝ Վեզիրովը, Պոլյանիչկոն և Դաշդամիրովը: Սուր ու անզիջում քաղաքական-գաղափարական բանավեճի ընթացքում հայկական կողմը դրսևորում է արդարացի և սկզբունքային դիրքորոշում Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրում՝ երկու հարևան հանրապետությունների ու ժողովուրդների միջև հարաբերությունները կարգավորելու նպատակով:

Գ. Ասատրյանը փաստարկված, պատմական նյութերի ու արխիվային փաստաթղթերի վրա խարսխված հարցադրումներով, մեր ժողովրդի արմատական շահերի հետևողական պաշտպանությամբ է հանդես գալիս նաև ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի՝ 1989 թ. օգոստոսի 31-ին Մոսկվայում կայացած ընդլայնված նիստում (Հայաստանի ԿԿ բյուրոյի և Ադրբեջանի ԿԿ բյուրոյի անդամների մասնակցությամբ):

Նիստը նվիրված էր Լեռնային Ղարաբաղի հիմնահարցից բխող սուր ու բարդ իրավիճակի քննությանը, Ղարաբաղի հարցի քաղաքական կարգավորման ուղիներ որոնելուն, տարածաշրջանում խաղաղություն ու կայունություն, հարևան հանրապետությունների ու ժողովուրդների միջև բնականոն փոխհարաբերություններ հաստատելու խնդիրներին:

Քաղբյուրոյի նիստի արդյունքների մասին ՀԿԿ կենտկոմի բյուրոյի անունից հանգամանալի հաղորդումով հանդես եկավ Գ. Ասատրյանը՝ Երևանի օպերային թատրոնի հրապարակում սեպտեմբերի 1-ին տեղի ունեցած բազմահազարանոց միտինգում:

1990 թվականից Հայաստանում ստեղծված քաղաքական նոր իրադրության մեջ Գ. Ասատրյանը ստիպված էր հեռանալ գործուն հասարակական-քաղաքական կյանքից: Սակայն անգամ ցուրտ ու խավար տարիներին էլ նա չդավաճանեց իր գաղափարներին ու սկզբունքներին:Որպես սոցիալիզմի գործի նվիրյալ՝ ակտիվ ջանքեր գործադրեց ձախ ուժերի միավորման, «Համահայկական սոցիալիստական կոնգրես» հասարակական-քաղաքական կազմակերպության ծրագրային ու կանոնադրական փաստաթղթերի մշակման ուղղությամբ: 1995 թ. այն գրանցվեց որպես «Կահսա հայկական կոնգրես» հասարակական-քաղաքական կազմակերպություն՝ ստեղծված սոցիալիզմի, ինչպես նաև հայ և ռուս ժողովուրդների բարեկամության ու համագործակցության գաղափարների հիման վրա:

Հայաստանի «Գիտելիք» ընկերության վարչության նախագահ, փիլ. գիտ. դոկտոր, պրոֆ. Լորիս Քալաշյանի և Գ. Ասատրյանի ջանքերով 1997 թ. ստեղծվել ու մինչ այժմ գործում է գիտահետազոտական մի ինքնատիպ հաստատություն՝ Հումանիզմի պրոբլեմների ակադեմիան, որտեղ ուշագրավ աշխատանքներ են տարվում ինչպես հումանիզմի տեսության ու պատմության, այնպես էլ արդի հումանիզմի տարբեր հայեցակետերի ուսումնասիրության, նոր հազարամյակի հումանիստական պարադիգմայի մշակման ուղղությամբ: Հումանիզմի հիմնահարցի տարբեր տեսանկյունների վերաբերյալ նրա մի քանի տասնյակ հոդվածներն ու զեկուցումները տպագրվել են ինչպես Հայաստանի, այնպես էլ Ռուսաստանի (Սանկտ Պետերբուրգ և այլ քաղաքներ), Ավստրիայի (Վիեննա) և Գերմանիայի (Մյունխեն) գիտական հեղինակավոր մի շարք պարբերականներում ու միջազգային գիտաժողովների նյութերի ժողովածուներում:

Գ. Ասատրյանը մենագրությունների հեղինակ է: Նրա «Հումանիզմը նոր հազարամյակի հիմնախնդիրների համատեքստում» ստվարածավալ ու հիմնարար աշխատությունը (Ե., 2014), արծարծվող հարցերի արդիականությամբ, մասշտաբայնությամբ ու վերլուծությունների խորությամբ աննախադեպ լինելով հայ իրականության մեջ, կարևոր ներդրում է արդի հումանիզմի հետազոտության ասպարեզում, արժեքավոր ուսումնասիրություն՝ միջազգային չափանիշներով:

Գ. Ասատրյանը Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի Հայոց փիլիսոփայության մասնաճյուղի իսկական, ինչպես նաև «Աշխարհի գեներալները հանուն խաղաղության» միջազգային ասոցիացիայի անդամ է: Գ. Ասատրյանի անբասիր աշխատանքը բարձր է գնահատվել պետության կողմից: Նա քանիցս ընտրվել է Երևանի քաղխորհրդի, Խորհրդային Հայաստանի 10-րդ և 11-րդ գումարումների Գերագույն խորհրդի պատգամավոր, 1989-1990 թթ. եղել է Գերագույն խորհրդի մանդատային հանձնաժողովի նախագահը: Նա բազմիցս ընտրվել է Հայաստանի կոմկուսի Երևանի քաղկոմի, ինչպես նաև կենտկոմի անդամ: 1989-1990 թթ. ՀԿԿ կենտկոմի բյուրոյի անդամ էր: 1990-ին մասնակցել է Խորհրդային Միության կոմկուսի 28-րդ համագումարին, ընտրվել համագումարի դեկավար մարմինների կազմում: Պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով (1976, 1981), ԽՍՀՄ, ՌԴ և Աֆղանստանի Դեմոկրատական Հանրապետության մի շարք մեդալներով, Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահության պատվոգրերով: Նրան շնորհվել է Խորհրդային Միության «Գիտելիք» ընկերության բարձրագույն պարգևը՝ ակադ. Ս. Վավիլովի անվան ոսկե մեդալը:

2015 թ. մայիսին, ֆաշիզմի դեմ խորհրդային ժողովրդի տարած հաղթանակի կապակցությամբ պարգևատրվեց ՌԴ կոմկուսի կենտկոմի՝ «Մեծ հաղթանակի 70 տարին» հուշամեդալով, իսկ Հայաստանի Հանրապետության անկախության տոնի առթիվ, երկարամյա պետական-հասարակական գործունեության համար նրան շնորհվեց «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալ: 2015 թ. հոկտեմբերին Էրեբունի քաղաքամրոցի 2797-րդ տարվա և իր ծննդյան 80-ամյակի կապակցությամբ Գ. Ասատրյանն արժանացավ Երևանի քաղաքապետի Ոսկե մեդալին:

ԱՂԱՍՅԱՆ Ա. Վ.
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ